ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ

Արդյունաբերական միավորումներում (ձեռնարկություններում) գիտատեխնիկական նվաճումների ներդրման տեսական ըմբռնումների և գործնական աշխատանքների հետազոտությունը ցույց է տալիս, որ գիտահետազոտական աշխատանքների պլանավորման համակարգում դեռևս գոյություն ունեն մի շարք չլուծված հարցեր, որոնք արգելք են դառնում գիտատեխնիկական առաջադիմության արագացման ճանապարհին։

Անդրադառնալով պլանավորման ֆունկցիայի իրականացմանը, անհրաժեշտ է նշել, որ այստեղ ամբողջությամբ հաշվի չեն առնվում պլանավորման այնպիսի սկզբունքների պահանջները, ինչպիսիք են ռեալությունը, համալիրությունը և անընդհատությունը։ Այսպես, գիտահետազոտական ինստիտուտներում և նախագծային ու փորձարարական կազմակերպություններում բավարար աշխատանք չի կատարվում գիտահետազոտական աշխատանքների տարբերակների ընտրության, դրանց տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորելու և արտադրության ներկայացրած պահանջի վերլուծության ուղղությամբ։ Հետևանքը լինում է այն, որ ժողովրդատնտեսական վերջնական արդյունքների ձեռքբերման ավելի արդյունավետ ճանապարհների ընտրությունը և գիտատեխնիկական ու արտադրական պլանների նպատակահարմար համակցումն իրականացվում են ոչ հիմնավորված ձևով։ Հաճախ էլ «գիտություն-արտադրություն» շղթայի պլանավորման բնագավառում հասարակություն-կոլեկտիվ-անհատ անցումը սահմանելիս անտեսվում է շահերի համապատասխանության սկզբունքային պահանջը։

Հայտնի է, որ տնտհաշվարկի պայմաններում միավորումների (ձեռնարկությունների) շահերը միշտ չէ, որ համընկնում են ժողովրդատնտեսականի հետ։ Արտադրանքի, այդ թվում նաև արտադրության միջոցների գների գործող համակարգում, օգտագործվող ֆոնդերի ու ռեսուրսների անբավարար վճարելիության և հավելյալ արդյունքի ուղղակի հաշվառման բացակայության պայմաններում տնտհաշվարկային միավորումների (ձեռնարկությունների) և ժողովրդական տնտեսության մակարդակով միավոր արտադրանքի ծախսերը տարբերվում են միմյանցից։ Արդյունքում այս կամ այն միավորման (ձեռնարկության) շրջանակներում ստացված տնտեսումը դեռևս չի նշանակում տնտեսման ձեռքբերում ամբողջ ժողովրդական տնտեսության մակարդակով։ Ահա թե ինչու առանձին կազմակերպություններում ստացված տնտեսումը, ժողովրդական տնտեսության մասշտաբով ձեռքբերվածի համեմատությամբ հասարակական շահերի տեսանկյունից կրում է «երկրորդական» բնույթ։ Բայց մյուս կողմից անհրաժեշտ է հաշվի առնել, որ սոցիալիստական տնտեսավարման մեջ տնտհաշվարկի զարգացումն ու խորացումը և արտադրության վերջնական արդյունքների ձեռքբերման ուղղությամբ աշխատավորա-

կան կոլեկտիվների նյութական ու բարոյական խթանման սկզբունքների իրացումն ավելի են բարձրացնում անտեսական ցուցանիշների, մասնավորապես՝ գիտահետազոտական աշխատանքների և նոր տեխնիկայի տնտհաշվարկային ցուցանիշների դերը։ Ծագած հակասությունը կարելի է հաջողությամբ լուծել հասարակության և կոլեկտիվի շահերի լավագույն համակցման ուղիով՝ գիտականորեն հիմնավորված ցուցանիշների համակարգի օգնությամբ։ Այդ կապակցությամբ էլ առաջարկում ենք «գիտություն-արտադրություն» շղթայի պլանավորման հետևյալ ցուցանիշների համակարգը։ 1. Ամփոփիչ ցուցանիշներ. ժողովրդատնտեսական արդյունք, տնտհաշվարկային արդյունք։ 2. Ընդհանուր տնտեսական ցուցանիշներ. ինքնարժեք, աշխատանքի արտադրողականություն, ֆոնդատարություն կամ ֆոնդահատույց, նյութատարություն (ներառյալ արտադրանքի էներգատարությունը) կամ միավոր արտադրանքի վրա աշխատանքի առարկաների տեսակարար ծախսումներ։ 3. Ձեռնարկության կազմակերպչատեխնիկական մակարդակի ցուցանիշներ. աշխատանքի մեքենայացման և ավտոմատացման աստիճան, աշխատանքի էներգաշինվածության աստիճան, որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռ, նոր արտադրանքի տեսակարար կշիռ, արտադրության մասնագիտացման աստիճան։

Ցուցանիշների առաջին խումբը հնարավորություն է տալիս գիտատեխնիկական միջոցառումների վերջնական արդյունքները պլանավորել ինչպես ժողովրդական տնտեսության, այնպես էլ առանձին միավորումների (ձեռնարկությունների) մասշտաբով։ Ցուցանիշների երկրորդ խումբը թույլ է տալիս պլանավորել գլխավոր տնտեսական պարամետրերին հասնելու կոնկրետ առաջադրանքները՝ ի հաշիվ արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման։ Երրորդը բնութագրում է գիտատեխնիկական առաջադիմության ազդեցությունն արտադրության գլխավոր տնտեսական պարամետրերի վրա և երևան է գալիս ոչ թե անմիջականորեն, այլ՝ արտադրության տարբեր կողմերի տեխնիկատնտեսական բնութագրերի բարելավման միջոցով՝ մեքենայացման, ավտոմատացման և մասնագիտացման աստիճանի բարձրացման, աշխատատարության և նյութատարության կրճատման, արտադրանքի նորացման և այլն։ Այսպես, օրինակ, պլանով նախատեսված տնտհաշվարկային արդյունքի (հաշվարկված ժողովրդատնտեսական արդյունքի հիման վրա) հավելաճն ապահովելու համար հարկավոր է պլանավորել աշխատանքի արտադրողականության աճի տեմպերն ի հաշիվ մեքենայացման և ավտոմատացման աստիճանի բարձրացման, արտադրության բոլոր նյութական ռեսուրսների օգտագործման բարելավման։ Դրան համապատասխան պլանավորվում են մեքենայացման և ավտոմատացման աստիճանի բարձրացումը, էներգաշինվածության աճը, արտադրության մասնագիտացման ու արտադրանքի որակի բարձրացումը և այլն։

Ներկայումս հասարակական արտադրության տարբեր մակարդակներում առաջին խմբի ցուցանիշները գործում են զուգահեռ. գիտահետազոտական ինստիտուտներում՝ ժողովրդատնտեսական, իսկ միավորումներում (ձեռնարկություններում)՝ տնտհաշվարկային արդյունքի ցուցանիշը[1]։ Տվյալ պրոցեսի

---

1 ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի որոշման մեջ նախատեսվում է գիտատեխնիկական միջոցառումների ներդրումից ստացվող տնտեսա-

կարգավորման, այսինքն հասարակության և առանձին արտադրական կոլեկտիվների շահերի լավագույն համակցման խնդրի լուծման համար տնտեսագետներն առաջ են քաշում տարբեր կարծիքներ, որոնք հիմնականում ստորաբաժանվում են երկու խմբի։

Տնտեսագետների առաջին խումբը (Մ. Վիլենսկի, Վ. Ֆելզենբաում, Վ. Լոգինով և ուրիշներ)[2] գտնում է, որ ընտրվող ցուցանիշը պետք է համապատասխանի ժողովրդական տնտեսության այն օղակի գործունեության բնույթին, որին անմիջականորեն հասցեագրվում է գիտատեխնիկական առաջադիմության պլանը և որտեղ ստեղծվում ու իրացվում է նոր տեխնիկայից ստացվող արդյունքը։ Քանի որ այդպիսի օղակ է միավորումը (ձեռնարկությունը), հետևաբար, ժողովրդատնտեսական արդյունքը չի կարող ծառայել որպես տնտեսական արդյունքի պլանավորման ցուցանիշ[3]։ Բացի այդ, նրանք պնդում են, որ ժողովրդատնտեսական արդյունքը, հաշվարկված որպես բերված ծախսերի տարբերություն, ոչ թե իրական, այլ պոտենցիալ մեծություն է այն իմաստով, որ վերջինս որոշվում է ոչ թե արտադրությունում գործողի, այլ հնարավոր տարբերակի (հայրենական և արտասահմանյան լավագույնի) նկատմամբ[4]։ Ելնելով նշվածից, նրանք առաջարկում են գիտատեխնիկական առաջադիմության պլանում օգտագործել միայն տնտեսաշվարկային արդյունքի ցուցանիշը, որն իրենց կարծիքով հնարավորություն կտա նոր տեխնիկայի ներդրման և ընդհանուր տնտեսական գործունեության պլանները օրգանապես կապակցել։ Մեր կարծիքով տնտեսական արդյունքի ցուցանիշի պլանավորման նման սկզբունքը չի հանգեցնի գիտատեխնիկական և արտադրական պլանների օրգանական կապին, ինչպես նաև «գիտություն-արտադրություն» շղթայի համալիր պլանավորմանը։ Մեզ սխալ է թվում նաև այն դրույթը, համաձայն որի ձեռնարկության շրջանակներում գիտատեխնիկական նվաճումների ներդրման արդյունքը պետք է ավելի շոստ գնահատվի, քան արդյունաբերության ճյուղում կամ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ[5], քանի որ սոցիալիզմի պայմաններում գիտատեխնիկական մշակմանը ներկայացվող հիմնական պահանջը հասարակության մասշտաբով աշխատանքային ծախսերի տնտեսման ապահովումն է։ Այստեղից՝ գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքի գնահատումը, գիտատեխնիկական մշակումների տնտեսական հիմնավորումն ու գիտական աշխատանքների պլանավորումը տնտեսաշվարկային արդյունքի ցուցանիշներով դառնում է անհնար։ Բացի այդ, վիճելի է նաև այն պնդումը, որ ժողովրդատնտեսական արդյունքի մեծությունը, հաշվարկված որպես բերված ծախսերի տարբերություն, զրկված է իրական հիմքից, քանի որ վերոհիշյալ մոտեցմամբ բերված

կան արդյունքը պլանավորել որպես հաստատվող ցուցանիշ։ Բայց այն հարցին, թե տնտեսական արդյունքի դերում, ո՞ր ցուցանիշը պետք է հանդես դա՝ ժողովրդատնտեսակա՞նը, թե՞ տնտեսաշվարկայինը, դեռևս վերջնական պատասխան չի տրված։

2 М. Виленский, Планирование эффекта научно-технического прогресса («Вопросы экономики», 1978, № 1, с. 109); В. Фельзенбаум, Определение планового эффекта новой техники (*նույն տեղում, էջ 118*); В. Логинов, В. Фельзенбаум, Плановый и фактический эффект новой техники (*նույն տեղում, 1975, № 11, էջ 80*).

3 «Вопросы экономики», 1978, № 1, с. 109.

4 *Նույն տեղում, էջ 118, նույն տեղում, № 11, էջ 80։*

5 М. Озиовин и др., Технический прогресс и планомерное развитие народного хозяйства, М., 1971, с. 72.

ծախսերի դերը մեկնաբանվում է միակողմանիորեն։ Մինչդեռ, բերված ծախսերը գործնական աշխատանքներում կատարում են երկակի դեր։ Այսպես, դրանք մի կողմից կիրառվում են գիտատեխնիկական տարբերակների ընտրությունը և նոր տեխնիկայի նախագծումն ու ստեղծումը տնտեսապես հիմնավորելիս, որի դեպքում որպես համեմատության բազա վերցվում են ոչ միայն արտադրությունում գործող նմուշները, այլև նույն նշանակության հայտնի լավագույն նախագծերը։ Այդպիսի հիմնավորումների փորձը վկայում է, որ բերված ծախսերը, իրոք, զրկված են ռեալ հիմքից և հանդես են գալիս որպես հաշվարկային, կողմնորոշող մեծություններ։ Մյուս կողմից, բերված ծախսերն օգտագործվում են նոր տեխնիկայի ներդրումից ստացված ժողովրդատնտեսական արդյունքի մեծությունը հաշվարկելիս, որի ժամանակ համեմատման բազա է վերցվում նույնպես լավագույնը, բայց արդեն արտադրության մեջ գործողը։ Այս դեպքում բերված ծախսերի տարբերությունը որոշակի ճշգրտումներից հետո հաշվարկային մեծությունից վերածվում է իրականի, իհարկե, եթե հաշվարկման կարգը գիտականորեն հիմնավորված է և օգտագործվող տվյալները հավաստի են։

Հարցի լուծմանն առավել ճիշտ է մոտենում գիտնականների երկրորդ խումբը (Լ. Գատովսկի, Պ. Բունիչ, Վ. Իվանչենկո և ուրիշներ)[6], որը «գիտություն-արտադրություն» շղթայի պլանավորման ժամանակ մատնանշում է ժողովրդատնտեսական արդյունքի ցուցանիշի առաջնությունը տնտհաշվարկայինի նկատմամբ՝ դնելով դրանց համալիր պլանավորման խնդիրը։

Այսպես, օրինակ, Լ. Գատովսկին այդ առիթով գրում է. «Ժողովրդատնտեսական արդյունքի այս կարևոր ցուցանիշը պետք է արտացոլվի հիմնական տնտհաշվարկային ցուցանիշներում, շահույթի և զուտ շահույթի, շահութաբերության, ինքնարժեքի, ինչպես նաև կենդանի և առարկայացած աշխատանքի (նյութեր, հիմնական ֆոնդեր, կապիտալ ներդրումներ) օգտագործման արդյունավետության ցուցանիշներում, տարբեր նորմատիվներում և ռեսուրսների ծախսման նորմաներում»[7]։ Պաշտպանելով այդ միտքը, Վ. Իվանչենկոն իրավացիորեն դրում է. «Գիտատեխնիկական առաջադիմությամբ ապահովվող արժեքային տնտեսումը պետք է ամբողջովին կապված լինի նորմաներում, նորմատիվներում և գներում արտացոլված ընթացիկ և միանվագ ծախսերի իջեցման նյութա-իրային գործոնների հետ»[8]։ Այլ կերպ ասած, պետք է միասնություն ստեղծվի նախագծված արդյունքի և կոլեկտիվների տնտեսական գործունեության ցուցանիշների միջև։

Ժողովրդական տնտեսության մեջ նոր տեխնիկայի, տեխնոլոգիայի, հայտնագործությունների և ռացիոնալիզատորական առաջարկությունների օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկայով (հիմնական դրույթներ) նախատեսվում է միավորումների (ձեռնարկությունների) համար սահմանել քանակական առաջադրանքներ՝ հաշվի առնելով նոր տեխ-

---

6 Л. Гатовский. Усиление ориентации планов и стимулов на высокоэффективную новую технику («Вопросы экономики», 1977, № 5, с. 117); П. Бунич. Хозрасчет и повышение эффективности научно-технического прогресса *(նույն տեղում,* № 6, *էջ 104)*; В. Иванченко. Научно-технический прогресс и народнохозяйственный план *(նույն տեղում, № 7, էջ 104)*.

7 «Вопросы экономики», 1977, № 5, с. 117.

8 *Նույն տեղում, № 7, էջ 104։*

նիկայի նախօրոք պլանավորված ցուցանիշները։ Մեթոդիկայի հիմնական սկզբունքը ժողովրդատնտեսական մոտեցման ապահովումն է։ Վերջինս արտահայտվում է այն բանում, որ տեխնիկական լուծման լավագույն տարբերակի ընտրությունն իրականացվում է ոչ թե արտադրության տնտհաշվարկային ցուցանիշների հիման վրա, այլ տարեկան բերված ծախսերի նվազագույնին և ժողովրդատնտեսական զուտ շահույթի առավելագույնին համապատասխան։

Ելնելով արված դատողություններից և ժողովրդատնտեսական ու տնտհաշվարկային արդյունքի պլանավորման վերաբերյալ մեթոդական ցուցումներից, կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը։ Նախ, ժողովրդատնտեսական արդյունքը անհրաժեշտ է օգտագործել որպես «գիտություն-արտադրություն» շղթայի պլանավորման առաջնային ամփոփ ցուցանիշ։ Երկրորդ, այն հիմք պետք է ծառայի «գիտություն-արտադրություն» շղթայի յուրաքանչյուր օղակի տնտհաշվարկային ցուցանիշների որոշման համար։ Երրորդ, այն պետք է գիտատեխնիկական առաջադիմության պլաններում մտցվի որպես հաստատվող ցուցանիշ։

Տնտհաշվարկային արդյունքի ցուցանիշը պետք է՝ ա) պլանավորվի ճյուղի, միավորման (ձեռնարկության) մակարդակով, բ) ամփոփի նոր տեխնիկայի արտադրության և սպառման հետ կապված առանձին արտադրական կոլեկտիվների վերջնական արդյունքները, գ) հիմք ծառայի «գիտություն-արտադրություն» շղթայում նյութական խթանում իրականացնելու համար։

Հիմք ընդունելով նշվածը, կատարենք կոնկրետ առաջարկություններ՝ ժողովրդատնտեսական և տնտհաշվարկային արդյունքների պլանավորման վերաբերյալ։ Դրա համար առաջին հերթին նպատակահարմար ենք գտնում իրականացնել գիտահետազոտական աշխատանքների և դրանց շնորհիվ ստեղծված նոր տեխնիկայի խմբավորում։ Որպես խմբավորման հատկանիշ ընդունում ենք տնտեսական արդյունքի կազմավորման ոլորտը, որի համաձայն գիտահետազոտական աշխատանքները և դրանց հիման վրա ստեղծված նոր տեխնիկան բաժանվում են երեք խմբի։ 1. Գիտահետազոտական աշխատանք և նրա հիման վրա ստեղծված նոր տեխնիկա, որն արդյունք է ապահովում արտադրության ոլորտում։ Եթե գիտատեխնիկական մշակումները նախորդի համեմատությամբ փոփոխության չեն ենթարկվում նոր աշխատանքի միջոցի սպառողական հատկությունները, այլ նպաստում են նրա արտադրության ծախսերի խնայողությանը, ապա արդյունք ստանում է արտադրողը։ Այս դեպքում նոր տեխնիկան հանդես է գալիս որպես նոր արտադրատեսակի արտադրություն։ Ընդ որում, արտադրության ոլորտում հնարավոր է ժողովրդատնտեսական արդյունքի ձևավորման երկու դեպք, որոնցից առաջինը պայմանավորված է արտադրության ծավալի ընդլայնմամբ, իսկ երկրորդը կապված է հին արտադրատեսակը որոշակի քանակական համամասնությամբ նորով փոխարինելու հետ։ Առաջին դեպքում ժողովրդատնտեսական արդյունքի մեծությունն առաջարկում ենք հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{Ա}_{\text{ժողտնտ.}} = \left[(\text{Ի}_1 + \text{Ն}_\text{գ} \text{Յ}_1) \frac{\text{Ծ}_2}{\text{Ծ}_1} \cdot \frac{\text{Գ}_1 + \text{Ն}_\text{գ}}{\text{Գ}_2 + \text{Ն}_\text{գ}} - (\text{Ի}_2 + \text{Ն}_\text{գ} \text{Յ}_2) \right] \text{Ք}_2 - \frac{\text{Ծ}_{\text{գ.ր.ա.}}}{\text{Ժ}_{\text{արդ.}}} \quad (1),$$

որտեղ՝

$Ա_{տարեկան}$ — տարեկան ժողովրդատնտեսական արդյունքի մեծությունն է, նոր տեխնիկայի արտադրության ոլորտում (ռուբլիներով),

$Ի_2$, $Ի_1$ և $Ֆ_2$, $Ֆ_1$ — համապատասխանաբար, արտադրող ձեռնարկություններում նոր և փոխարինվող արտադրանքի ինքնարժեքն ու ֆոնդատարությունն է (ռուբլի/միավոր)[9],

$\frac{Ծ_2}{Ծ_1}$ — նոր աշխատանքի միջոցի արտադրողականության աճի գործակիցն է (բազիսայինի հետ համեմատած),

$Ծ_2$ և $Ծ_1$ — նոր և բազիսային աշխատանքի միջոցի օգտագործման դեպքում տարեկան արտադրված արտադրանքի ծավալն է (բնեղեն միավորներով),

$\frac{Գ_2+Ն_գ}{Գ_2+Ն_գ}$ — նոր աշխատանքի միջոցի ծառայության ժամկետի փոփոխության գործակիցն է (բազիսայինի հետ համեմատած),

$Գ_2$ և $Գ_1$ — նոր և բազիսային աշխատանքի միջոցի վերականգնման գործակիցն է,

$Ծ_{արտ.}$ — արտաարտադրական ծախսերի գումարն է, հաշվի առած ժամանակի գործոնը (ռուբլիներով),

$Ժ_{արդ.}$ — մշակումը արդյունավետ օգտագործելու տևողությունն է (տարիներով),

$Ֆ_2$ — ժողովրդական տնտեսության մասշտաբով աշխատանքի միջոցների տարեկան թողարկման ծավալն է (միավորներով),

$Ն_գ$ — արդյունավետության նորմատիվային գործակիցն է ($Ն_գ=0,15$)։

Բանաձևից (1) հետևում է, որ մի կողմից մեքենայի որակական բնութագրումների (արտադրողականություն, երկարատևություն) բարելավման հետ միասին կրճատվում է միևնույն ծավալի արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի միջոցների պահանջը, որն էլ հանգեցնում է արտադրական սարքավորումների նորացմանն ուղղվող ռեսուրսների ազատմանը։ Մյուս կողմից՝ աշխատանքի միջոցի կառուցվածքային փոփոխությունները նվազեցնում են արտադրության ընթացիկ ծախսումները։ Արդյունքում ձևավորվում է ժողովրդական տնտեսության մասշտաբով աշխատանքի միջոցների տարեկան թողարկումից ($Ֆ_2$) և նրա ծառայության ժամանակաշրջանում ստացված արդյունքի մեծությունը։

Տնտհաշվարկային արդյունքի մեծությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$Շ_{տնտ. հաշ.} = \sum_{i=1}^{n} (Գ_2 - Ի_{2i})\, Ֆ_{2i} - ՏՎ \sum_{i=1}^{n} Վ_i - Գ_ֆ \sum_{i=1}^{n} Ֆ_i - \sum_{i=1}^{n} Հ_i \qquad (2),$$

---

[9] Տնտեսագիտական գրականության մեջ ժողովրդատնտեսական արդյունքի հաշվարկման այդպիսի մոտեցումը տեսականորեն հիմնավորված է և, նույնիսկ, 1973 թ. ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտատեխնիկական առաջադիմության տնտեսական պրոբլեմների բաժնում նախապատրաստված և ինստիտուտի գիտական խորհրդի հավանությանն արժանացած մեթոդիկայում ժողովրդատնտեսական արդյունքը հաշվարկվում է տվյալ օգտակար արդյունքի ստացման համար անհրաժեշտ արտադրական ֆոնդերը արդյունավետության նորմատիվային գործակցով բազմապատկելով։

որտեղ՝

$Շ_{\text{տնտ. հաշ.}}$ — հաշվարկային շահույթի տարեկան ծավալն է արտադրող ձեռնարկություններում (ռուբլիներով),

$Գ_2$ և $Ի_{2i}$ — արտադրված նոր արտադրանքի մեծածախ գինը և ինքնարժեքն է i-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

$Թ_{2i}$ — արտադրված նոր արտադրանքի տարեկան ծավալն է, i-րդ ձեռնարկությունում (միավորներով),

$Վ_i$ — նոր արտադրանքի արտադրության համար պլանավորվող վարկի մեծությունն է (ֆոնդերի ձեռքբերման նպատակով), ռուբլիներով,

$Ֆ_i$ — նոր արտադրանք արտադրելու համար i-րդ ձեռնարկությունում ֆոնդերի պլանային ծավալն է (ռուբլիներով),

$ՏՎ$ և $Գ_ֆ$ — վարկի դիմաց մուծումների և ֆոնդավճարի սահմանված չափն է (տոկոսներով),

$Հ_{նi}$ — նոր արտադրանքի արտադրության դեպքում բյուջե կատարվող հաստատագրված մուծումներն են i-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

$i = \overline{1, n}$ — նոր տեխնիկա արտադրող ձեռնարկությունների թիվն է։

Որոշ հեղինակներ[10] ձեռնարկության համար նախագծելով այսպես կոչված լրիվ ժողովրդատնտեսական ծախսեր, դրանց կազմի մեջ մտցնում են այնպիսի տարրեր, ինչպիսիք են ֆոնդավճարը, ռենտավճարը և Նգ·Ֆ։ Կարծում ենք, որ գնահատելով ժողովրդական տնտեսության տեսանկյունից, անհրաժեշտ է որոշել զուտ արդյունքի ընդհանուր աճը, մինչդեռ ֆոնդավճարը, ռենտավճարը և բանկային մուծումները համարվում են շահույթի բաշխման ձևեր։ Այլ բան է, եթե գնահատում կատարվում է ձեռնարկության տեսանկյունից։ Տվյալ դեպքում էլ ձեռնարկության համար կարևոր է որոշել շահույթի աճի այն մասը, որը մնում է նրա տրամադրության տակ, պարտադիր մուծումները կատարելուց հետո։

Երկրորդ դեպքում ժողովրդատնտեսական արդյունքի տարեկան մեծությունը հաշվարկում ենք նույնպես բերված (1) բանաձևի օգնությամբ, իսկ տնտհաշվարկային արդյունքը նպատակահարմար ենք գտնում որոշել հետևյալ կերպ.

$$\Delta Շ_{\text{տնտ. հաշ.}} = \sum_{i=1}^{n} \left[(Գ_2 - Ի_{2i}) Թ_{2i} - (Գ_1 - Ի_{1i}) Թ_{1i} \right] -$$

$$- ՏՎ \sum_{i=1}^{n} Վ_i - Գ_ֆ \sum_{i=1}^{n} \Delta Ֆ_i - \sum_{i=1}^{n} Հ_{նi} \qquad (3),$$

որտեղ՝

$\Delta Շ_{\text{տնտ. հաշ.}}$ — հաշվարկային շահույթի տարեկան հավելաճն է արտադրող ձեռնարկություններում (ռուբլիներով),

$Գ_1$ և $Ի_{1i}$ — բազիսային արտադրանքի գինը և ինքնարժեքն է i-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

---

[10] Д. Львов, Экономика качества продукции, М., 1972, с. 114; Л. Вааг, О показателе производительности труда («Экономика и организация промышленного производства», 1970, № 5, с. 54).

$\Delta Ֆ_i$ — նոր արտադրանքի արտադրության հետ կապված լրացուցիչ ֆոնդերի պլանային ծավալն է i-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

$Ֆ_{1i}$ — բազիսային արտադրանքի արտադրված տարեկան ծավալն է i-րդ ձեռնարկությունում (միավորներով)։

Մեզ վիճելի է թվում Մ. Վիլենսկու այն կարծիքը, ըստ որի հաշվարկային շահույթի հավելաճը չի կարող համարվել տնտհաշվարկային արդյունքի ցուցանիշ, քանի որ այդ դեպքում նոր տեխնիկայի իրացումից ստացվող շահույթը տնտեսապես կապված չէ շահույթի այն մասի հետ, որն արտադրողը ստանում է նախկին տեխնիկայի իրացումից[11]։

2. Գիտահետազոտական աշխատանք և դրա հիման վրա ստեղծված նոր տեխնիկա, որն արդյունք է ապահովում սպառման ոլորտում։ Գիտատեխնիկական նախագծի շնորհիվ ստեղծված նոր տեխնիկային բնորոշ է սպառողական հատկությունների փոփոխումը։ Վերջինս էլ որոշակիորեն կապված է աշխատանքի միջոցի արտադրության ծախսերի հետ։ Ընդ որում, միավոր արտադրանքի (նոր տեխնիկայի) արտադրության հետ կապված ծախսերը կարող են աճել, նվազել կամ էլ մնալ անփոփոխ։ Առաջին և երրորդ դեպքերում տնտեսական արդյունքը գոյանում է նոր տեխնիկայի սպառման ոլորտում։ Երբ միավոր արտադրանքի ծախսերն աճում են, ապա տնտեսական արդյունքի հաշվարկման ժամանակ ծագում է սպառման ոլորտում առաջացած տնտեսման հետ արտադրության ծախսերի համադրման խնդիրը։ Այսինքն՝ բազիսային տարբերակի համեմատությամբ նոր տեխնիկայի արտադրության գերազանցող տեսակարար ծախսերը սպառման ոլորտում հանդես են գալիս որպես միանվագ ներդրումներ։ Ելնելով դրանից, ժողովրդատնտեսական արդյունքի տարեկան մեծությունը կարող ենք հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$Ա_{ժող.\ տնտ.} = [[Ի_1 N_2 + (Ի_1 + Ն_ֆ Ֆ_1) Ն_ֆ -$$

$$- [Ի_2 N_2 + (Ի_2 + Ն_ֆ Ֆ_2 + Ն_ֆ \Delta Ֆ') Ն_ֆ]] Ֆ_2' - \frac{Ծ_{արտ.}}{Ժ_{արդ.}} \qquad (4),$$

որտեղ՝

$Ի_2'$ և $Ի_1'$ — նոր և բազիսային աշխատանքի միջոցի օգնությամբ արտադրված (կատարված) միավոր արտադրանքի (աշխատանքի) ինքնարժեքն է (առանց ամորտիզացիոն հատկացումների), ռուբլի/միավոր արտադրանք (աշխատանք),

N_2 — նոր աշխատանքի միջոցի միավորի թողարկած արտադրանքի տարեկան ծավալն է (միավորներով),

$\Delta Ֆ'$ — նոր աշխատանքի միջոցի շահագործման հետ կապված լրացուցիչ ֆոնդատարությունն է (ռուբլի/միավոր),

$Ֆ_2'$ — նոր աշխատանքի միջոցի տարեկան սպառման քանակն է (միավորներով),

$Ծ_{արտ.}$ — արտաարտադրական ծախսերի գումարն է, ժամանակի գործոնը հաշվի առած (ռուբլիներով),

---

11 «Вопросы экономики», 1978, № 1, с. 111.

Ժ$_{արդ.}$ — նոր աշխատանքի միջոցի արդյունավետ շահագործման տևողությունն է (տարիներով)։

Երրորդ դեպքում ժողովրդատնտեսական տարեկան արդյունքի մեծությունը հաշվարկում ենք հետևյալ կերպ.

$$\text{Ա}_{\text{ժող. տնտ.}} = [(\text{Ի}'_1 + \text{Ն}_{\text{զ}}\text{Ֆ}'_1) - (\text{Ի}'_2 + \text{Ն}_{\text{զ}}\text{Ֆ}'_2)] \cdot N_2 \text{Թ}'_2 - \frac{\text{Ծ}_{\text{արտ.}}}{\text{Ժ}_{\text{արդ.}}} \qquad (5),$$

որտեղ՝

Ֆ$'_2$ և Ֆ$'_1$ — նոր և բազիսային աշխատանքի միջոցի օգնությամբ թողարկված արտադրանքի տեսակարար ֆոնդատարությունն է, ռուբլի/միավոր արտադրանք (աշխատանք)։

Երկու դեպքում էլ տնտհաշվարկային արդյունքի մեծությունն առաջարկում ենք հաշվարկել հետևյալ բանաձևով[12].

$$\Delta\text{Շ}_{\text{տնտ. հաշ.}} = \sum_{j=1}^{m} [(\text{Գ}'_2 - \text{Ի}'_{2j}) - (\text{Գ}_1 - \text{Ի}'_{1j})]\,\text{Թ}_{2j} N_2 -$$

$$- \text{Գ}_{\text{ց}} \sum_{j=1}^{m} \Delta\text{Ֆ}'_j - \text{ՏԿ} \sum_{j=1}^{m} \text{Կ}'_j - \sum_{j=1}^{m} \text{Հ}'_{\text{ն}j} \qquad (6)$$

որտեղ՝

ΔՇ$_{տնտ. հաշ.}$ — նոր տեխնիկան սպառող ձեռնարկություններում հաշվարկային շահույթի տարեկան հավելաճն է (ռուբլիներով),

Գ$'_2$, Գ$_1$ և Ի$'_{2j}$, Ի$'_{1j}$ — նոր և բազիսային աշխատանքի միջոցի օգնությամբ արտադրված (կատարված) արտադրանքի (աշխատանքի) գինն ու ինքնարժեքն է, համապատասխանաբար j-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

Թ$_{2j}$ — նոր աշխատանքի միջոցի տարեկան սպառման քանակն է j-րդ ձեռնարկությունում (միավորներով),

ΔՖ$'_j$ — նոր աշխատանքի միջոցի շահագործման հետ կապված լրացուցիչ ֆոնդերի պլանային ծավալն է j-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

Կ$'_j$ — նոր աշխատանքի միջոցի շահագործման հետ կապված անհրաժեշտ պլանային վարկի մեծությունն է j-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

Հ$'_{նj}$ — նոր աշխատանքի միջոցի շահագործման ժամանակ բյուջե կատարվող հաստատագրված մուծումների չափն է j-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով),

$j = \overline{1m}$ — նոր աշխատանքի միջոցը սպառող ձեռնարկությունների թիվն է։

Բերված բանաձևը (6) թույլ է տալիս լրիվ պատկերացում կազմել սպառման ոլորտում ձևավորված տնտհաշվարկային արդյունքի մեծության մասին։ Այդ տեսակետից էլ, մեր կարծիքով, ճիշտ է նշում Մ. Վիլենսկին, որ

---

[12] Նշենք որ սպառման ոլորտում տնտհաշվարկային արդյունքի մեծությունը որոշվում է (6) բանաձևի օգնությամբ միայն այն դեպքում, եթե նոր աշխատանքի միջոցի գինն ընդգրկում է այնքան շահույթ, որքան կազմում է նոր արտադրանքի արտադրության հետ կապված լրացուցիչ ֆոնդերի և արդյունավետության նորմատիվային գործակցի արտադրյալը (Նգ. ΔՖ)։

նոր տեխնիկայի, տեխնոլոգիայի, հայտնագործությունների և ռացիոնալիզատորական առաջարկությունների օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկայում սպառման ոլորտում տնտհաշվարկային արդյունքի հաշվարկման եղանակը հնարավորություն է տալիս երևան բերել արդյունքի այն մասը, որը ձեռք է բերվում արտադրանքի ինքնարժեքի իջեցման հաշվին[13]։

Նոր տեխնիկան օգտագործվում է նաև սպառման ոլորտում արտադրության ծավալը ընդլայնելու համար։ Տվյալ դեպքում տնտհաշվարկային արդյունքը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\text{Շ}_{\text{տնտ. հաշ.}} = \sum_{j=1}^{m} (\text{Գ}_2 - \text{Ի}'_{2j})\text{Թ}'_{2j} N_2 - \text{Գ}_{\text{ֆ}} \sum_{j=1}^{m} \text{Ֆ}'_j - [illegible] \sum_{j=1}^{m} [illegible] - \sum_{j=1}^{m} \text{Հ}'_{\text{ն}j} \qquad (7),$$

որտեղ՝

$\text{Շ}_{\text{տնտ. հաշ.}}$ — տնտհաշվարկային արդյունքի տարեկան ծավալն է նոր տեխնիկան սպառող ձեռնարկություններում (ռուբլիներով),

$\text{Ֆ}'_j$ — նոր աշխատանքի միջոցի շահագործման հետ կապված ֆոնդերի ծավալն է j-րդ ձեռնարկությունում (ռուբլիներով)։

3. Գիտահետազոտական աշխատանք և դրա հիման վրա ստեղծված նոր տեխնիկա, որն արդյունք է ապահովում ինչպես արտադրության, այնպես էլ սպառման ոլորտում։ Այսինքն, գիտատեխնիկական նախագծման շնորհիվ արտադրության և սպառման ոլորտներում կրճատվում են միավոր արտադրանքի արտադրության ծախսերը։ Այս դեպքում, տարեկան ժողովրդատնտեսական արդյունքի մեծությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$\text{Ա}_{\text{ժող. տնտ.}} = \left\{ \left[(\text{Ի}_1 + \text{Ն}_{\text{ֆ}}\text{Ֆ}) \cdot \frac{\text{Ծ}_2}{\text{Ծ}_1} \cdot \frac{\text{Գ}_1 + \text{Ն}_{\text{ֆ}}}{\text{Գ}_2 + \text{Ն}_{\text{ֆ}}} + (\text{Շ}_1 - \text{Շ}_2) - (\text{Ֆ}''_2 - \text{Ֆ}'_1) \cdot \text{Ն}_{\text{ֆ}} \right] - \left[(\text{Ի}_2 + \text{Ն}_{\text{ֆ}}\text{Ֆ}_2) \right] \right\} \text{Թ}_2 - \frac{\text{Ծ}_{\text{արտ.}}}{\text{Ժ}_{\text{արդ.}}} \qquad (8),$$

որտեղ՝

Շ_2 և Շ_1 — նոր աշխատանքի միջոցի օգնությամբ արտադրված (կատարված) արտադրանքի (աշխատանքի) ծավալի հաշվով նոր և բազիսային աշխատանքի միջոցի տարեկան շահագործման ծախսերի մեծությունն է (ռուբլիներով)։ Այս ծախսերում հաշվի են առնվում ինչպես աշխատանքի միջոցի կապիտալ նորոգմանն ուղղվող ամորտիզացիայի մի մասը, այնպես էլ լրացուցիչ հիմնական ֆոնդերի ամորտիզացիոն հատկացումները։

$\text{Ֆ}''_2$ և Ֆ_1 — նոր աշխատանքի միջոցի օգնությամբ արտադրված (կատարված) արտադրանքի (աշխատանքի) ծավալի հաշվով նոր և բազիսային աշխատանքի միջոցի շահագործման հետ կապված լրացուցիչ հիմնական ֆոնդերի մեծությունն է (առանց քննարկվող միջոցների արժեքը հաշվի առնելու), ռուբլիներով։

Արտադրության և սպառման ոլորտներում տնտհաշվարկային արդյունքի մեծությունը կարելի է հաշվարկել (6) և (7) բանաձևերի օգնությամբ։

---

13 «Вопросы экономики», 1978, № 1, с. 111.

Հանրագումարի բերելով ասածը, կարող ենք եզրակացնել, որ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, նոր տեխնիկայի նախագծման և ստեղծման փուլերում աշխատանքը պետք է անմիջական հասարակական բնույթ, միևնույն ժամանակ գրանցից յուրաքանչյուրում ձեռք է բերում յուրահատուկ ձև, որը և կանխորոշում է ժողովրդատնտեսական արդյունքի ձևափոխումը տնտեսավարականի։ Հետևաբար, պլանավորված գիտատեխնիկական միջոցառումների ժամանակին իրացումն ու գրանցից ժողովրդատնտեսական արդյունքի ճիշտ ստացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե հաշվի առնվեն կոնկրետ արտադրական կոլեկտիվները և նրանցում ձևավորվելիք տնտեսավարական արդյունքների մեծությունները։ Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ առանձին արտադրական կոլեկտիվներում նոր տեխնիկայի ներդրումից ստացված տնտեսավարական արդյունքների գումարը (հաշվի առած շահույթից կատարվող սկզբնական մուծումները) պետք է համընկնի ժողովրդատնտեսական արդյունքի մեծության հետ։ Վերջինս կարելի է առաջին խմբի համար ներկայացնել հետևյալ կերպ[14].

$$Ա_{ժող. տն.} = \sum_{i=1}^{n} Շ_{տն. հաշ.} + Գ_{ֆ} \sum_{i=1}^{n} Ֆ_{i} + ՏՎ \sum_{i=1}^{n} Վ_{i} + \sum_{i=1}^{n} Հ_{i} \qquad (9),$$

Բերված կապն էլ պետք է հաշվի առնել «գիտություն-արտադրություն» շղթայի միջանցիկ և անընդհատ պլանավորումն իրականացնելիս։

ВЗАИМОСВЯЗЬ НАРОДНОХОЗЯЙСТВЕННОГО И ХОЗРАСЧЕТНОГО ЭФФЕКТА

АРТАШЕС ТАРЛАМАЗЯН

Резюме

В целях устранения имеющегося несоответствия между планами научно-технической и производственно-хозяйственной деятельности ставится задача комплексного планирования народнохозяйственного и хозрасчетного эффекта, отвечающая требованию принципа сочетания интересов общества и коллектива. Предлагаемые формулы расчета величин народнохозяйственного и хозрасчетного эффекта для трех групп новых средств труда показывают количественное соответствие между величиной народнохозяйственного эффекта и суммой хозрасчетных эффектов отдельных производственных коллективов. Существующую взаимосвязь представляется целесообразным учитывать при сквозном и непрерывном планировании цикла «исследование—производство».

---

14 Ժողովրդատնտեսական և տնտեսավարական արդյունքների միջև գոյություն ունեցող քանակական համապատասխանությունը նույնանման ձևով կարելի է արտահայտել նոր տեխնիկայի երկրորդ և երրորդ խմբերի համար։